

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

ուղարկոյ համար
 Տարեկան 10 Ձր.
 Վեցամսեայ 5 »
 Բաւաստանի հա-
 մար Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Աւերիկայի համար
 Տարեկան 2.50 Տր.
 Վեցամսեայ 1.25 »
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Իրանուցան սոյր առաջին
 երեսին համար 40 սանթիմ
 է. իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթիմ է. երեսին
 աւելի սնդակներու համար
 20 Օլո գնդը կըլլայ:

ՇՆԱԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇՆԱԹԻ ԵՒ ՇՆԱԿՈՒ ՕՐԵՐԸ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նամակ և դրամ դրկի
 Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Գրութիւնք ևս չեն տրուիր

(Գին 10 ՍԱՆԹԻՄ)

(Գին 10 ՍԱՆԹԻՄ)

ՀԱՄԱԼԻ ՔՈՒԷՆ

Ֆիլիպոսոյի թաղականու-
 թեան ընտրութեան միջոցին՝ ժո-
 ղովի նախագահ «տօքթօր» Փա-
 վաղեան յանգընել է արտասա-
 նել հետեւեալ խօսքերը— «հա-
 մային քուէն չի ընդունուիր»:
 Արչափ մեծ արհամարանք դէպի
 չարատանջ հայաստանցիին: Եւ
 ահա այս արհամարական նախա-
 դասութեան մէջ է պարփակուած
 այն բոլոր զգացումներ զումարը,
 որ երկար տարիներ ընթաց-
 քում «ամենազնաւասակաւ տարրի»
 չորպաճի ներկայացուցիչները
 տածել են դէպի Հայաստանի
 գիւղացուն, նրան իրանցից ա-
 ւելի ստորին աստիճանի մարդ
 համարելով:

Մի զաւամած և փթած ուղե-
 ղով մարդ իրեն թոյլ է տալիս
 ամենամեծ արհամարանքով քիչից
 զրկել հայաստանցուն. այն հա-
 յին, որը հիմքն է եղել հայու-
 թեան, միշտ լինելու է, և, որը
 դժոխային ամեն տեսակ տան-
 ջանքերի գիւղացուն մինչեւ
 օրս պահպանել է մեր հարազատ
 երկիրը, որին կրկին տիրանալու
 և նրա վրա հայկական նոր ու ա-
 զատ կեանք ստեղծելու ճիգերն
 ենք թափում մենք այսօր:

Այդ տեսակ անբարոյական
 զգացումներ և մտքեր կարող
 է արտայայտել միայն մինչեւ
 սակրները քարացած հայ չորպա-
 ճին, կամ նրա օճախում սնուած
 ու դաստիարակուած պնակա-
 լէզը:

Այս վատ ու զղուելի երեւոյթը
 մատնացոյց անելուց յետոյ՝ շտա-
 պում ենք հրճուանքով շնորհա-
 ւորել ֆիլիպոսոյի այն ժողո-
 վականներին, որոնք հասկանալի
 յուզումով ու զգուանքով Պ. Տօք-
 թօրին զգացնել են տւել նրա
 յիմարկոչտութիւնը և պաշտպա-
 նել հայ համալի հայական իրա-
 ւունքները: Այդ լաւ դաս կը լինի
 ոչ միայն «տօքթօր»ի համար,
 այլ և բոլոր նրանց, որոնք թուրք
 արիստոկրատի հովեր առած՝ չեն

ուզում հայ համալին մարդու տեղ
 դնել և այնքան առաջ են անց-
 նում, որ յանգընում են նրան
 քուէի իրաւունքից զրկել հասա-
 րակական ձեռնարկութիւնների
 մէջ:

Այս, այդ ընտրութեան հազնոյ
 բաշխուողներին, բարոյական
 ապտակներ հասցնելով, պէտք է
 հասկանալ թէ հայ համալը ա-
 մենիցս շատ իրաւունքներ ունի
 մեր հասարակական գործերի և
 հիմնարկութիւնների մէջ. որով-
 հետեւ հայ ժողովուրդը նրանցից
 է կազմված և նրանով է շարու-
 նակում իր գոյութիւնը... ու-
 ղովհետեւ առանց համալ հայաս-
 տանցու մեր էֆէնտի չորպաճի-
 ները գուցէ այսօր ամեն բան
 ծախած լինէին... Եւ վերջա-
 պէս այդ հայաստանցի համալն է
 որ ապագային աւելի ազատ և
 մաքուր ժողովուրդ դառնալու
 յոյսն է ներշնչում մեզ և ոգեւո-
 ղում մեր վերածնութեան գաղա-
 փարով:

Հայաստանցի գիւղացին ամեն
 տեղ ու ամեն հասարակական գոր-
 ծի մէջ պէտք է իր ձայնը ունե-
 նայ: Եւ է անպայման տեղը այն
 բոլոր ազգային հիմնարկութիւն-
 ների, որոնք մեր ազգայնական
 շղթայի օղակներն են կազմում:

Մինչեւ այսօրս հայաստանցի
 համալի իրաւունքները միշտ
 բռնաբարված են եղել թէ երկրի
 մէջ և թէ դուրսը: Այսօր չպէտք
 է թոյլ տալ որ նոյն ձեւով շա-
 րունակուի, որ հայ համալը զուրկ
 մնայ նոյնիսկ իր ազգայնական
 ամենատարրական իրաւունքից:
 Ամեն մի ազնիւ և զարգացած
 հայ պարտաւոր է պաշտպանել
 թէ թուրքից և թէ մեր չորպա-
 ճիներից հարստահարված և ար-
 համարված հայ համալի իրա-
 ւունքները:

Խօսքներս վերջացնելով խոր-
 հուրք ենք տալիս Տօքթօր Փա-
 վաղեանին՝ որ այդ տեսակ ժո-
 ղովների մասնակցած միջոցին՝
 յիշէ իր հանգուցեալ եղբայր Ս.
 Փափաղեանին, որը «համալ մշե-

ցիներին» երեսփոխանն էր Ազ-
 գային ժողովում, համոզված էր
 թէ «հայութիւնը համալներ կը
 կազմեն» և իր այդ համոզումի
 համեմատ՝ վերաբերվում էր դէպի
 այդ «համալները»:

ՎԱՐԳՅ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆՉ ԿԱՆՑԻՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ

4. Պոլիս, 13 Յուլիս

Թուրքիոյ հորիզոնին վրայ
 մութ սմոկեր կը կուտակուին.
 մեծ փոթորիկ մը կսպասուի:
 Արդէն ըսի թէ Սուլթանի մայ-
 բարազաքին մէջ անսովոր իրար-
 անցում կայ:

Ահ ու սարսափ կը տիրէ քրիս-
 տոնէից մէջ. թուրք խուժանը
 կատղած է և հրամանի կսպասէ:
 Ձերբակալութիւնք ամենայն խը-
 տութեամբ յառաջ կը տարուին.
 Պօլսոյ ամէն պանդոկները և հա-
 յոց տուններ կը խուզարկուին և
 կարճանագրուին: Երթեւեկու-
 թիւնք դադարած են. վաճառա-
 կանները անէծք կը տեսան.
 պատճառը, պատճառը իբր թէ
 հայոց կողմէ նոր ցոյց տեղի պի-
 տի ունենայ: Այս տեսակ լուր մը
 տարածուելուն պատճառը թերեւս
 «Սթանտարտ» թերթին քաշուած
 մէկ հեռագիրն է: Հեռագիրը կը
 նկարագրէ հայոց անտանելի վի-
 ճակը և կաւելցնէ՝ «եթէ տէրու-
 թիւնք անմիջապէս դործնական
 քայլ մը չառնեն, հաւերը իրենց
 ձայնը լսել տալու համար մի նոր
 ցոյց պիտի սարքեն»:

Պօլսոյ մէջ ուրիշ լուր մըն ալ
 կը շրջի. իբր թէ 17 յեղափո-
 խականներ արտասահմանէն Պօ-
 լիս մտած են: Չարմանալի չէ
 այս, եթէ մտնող անձերուն թիւը
 ու յեղափոխաւն ըլլալը գիտէին,
 ուրեմն ինչո՞ւ չը ձերբակալու-
 ցին:

Գուտաներէն եկած նամակնե-
 րուն նայելով կառավարութիւնը
 ամենայն խուժանամբ չորստար-
 ուան զինուորական տուրքը կը
 հաւարէ:

Օրմանեանը ի՞նչ կըսէ սօսր:

այս ալ իր ազգասիրութեանը ար-
 գիւնքը չէ:

Հայ ժողովուրդը խաբեց ըսե-
 լով թէ ինք յաջողած է իր Օգոստ.
 Վեհապետին բաշխել տալ երկու
 տարուան զինուորական տուրքը:
 Ո՛չ, հայ ժողովուրդ, Օրմանեան
 բնաւ հայ ազգը չը մտածէր. այլ
 միմիայն իր անձը և փառքը:
 Սուլթանի հլու և հնազանդ ծա-
 ուան է և իր փառքը անոր հո-
 վանաւորութեան տակ կուզէ զըս-
 նալ: Կաթողիկոս չէ, սակայն
 կաթողիկոսի հովեր կառնէ և կա-
 թողիկոսի գործեր կընէ:

Աչքը անկած է Սոսյ կաթողի-
 կոսական թափուր աթոռին և
 տարակոյս չունիմ թէ պիտի յա-
 ջուղի, եթէ հայ զարգացեալ
 տարրը չջանայ անոր «մուրատը»
 իր սրտին մէջ թողուլ:

Օրմանեանը՝ Սուլթանին հլու
 և հնազանդ ծառան ըլլալը ապա-
 ցուցանելու համար հետեւեալ
 դէպքը պիտի նկարագրեմ:

Համբարձման տօնի առթիւ,
 Օրմանեան հրաւիրուած էր Ազգ.
 Հիւանդանոցի Ս. Փրկչի մատրան
 մէջ պատարագ մատուցանել.
 միեւնոյն օրը Սուլթանի զակին
 և այլոց թրփատութեան հանդէսը
 կը կատարուէր: Պատարագը սկը-
 սած էր և Օրմանեան զգեստաւոր-
 ուած. և ահա սուլթանական
 պատգամաւորութիւն մը կը հասնի
 հիւանդանոց և կը հրաւիրէ Օր-
 մանեանը թրփատութեան առթիւ
 պալատի մէջ տրուած հացկերոյ-
 թին ներկայ գտնուելու: Ձեզ
 կըսեմ, հայ ժողովուրդ, ի՞նչ
 կը սպասէիք որ ընէր Օրմանեանը
 իր վեհապետին աչքը մտնելու
 և «ղէրտէ փիլա» ուտելու փա-
 փաքով պատարագը ձգեց և հա-
 գոտաները խոլոր մոլոր մի կողմ
 նետելով շունչը պալատ առաւ.
 բայց, դժբաղդաբար բրօկրամը
 փոխուած ըլլալով, օտար ազգաց
 հացկերոյթը միւսօրուան ձգուած
 էր: Օրմանեան ետ դարձաւ:
 Աւելի լաւ չէ՞ր ըլլար եթէ Օր-
 մանեան գլխուն թաղը, վրայի
 շուրջառը և ձեռքի գաւազանը
 մէկ կողմ նետէր և գլուխը ձեռ-
 մակ «սարըխ» մը փաթկած վրան
 երկայն «ճիւղպէ» մը առած և

ձեռքը թրխատիչ գործին երթար
իր վեհապետին տղան թրխատէր։
Այս դէպքը կապացուցանէ նաեւ
թէ Օրմանեան ազգասէր մը չըլ-
լալով հանդերձ կրօնական մըն
ալ չէ, հետեւաբար եկեղեցեաց
մէջ անոր անունը յիշելը մեծ ու-
ճիւր մըն է։

Նորութիւն մըն ալ կուզէ՞ք։
Կերելի թէ ոստիկանական նա-
խարարը այր լրտեսներուն խո-
ժու դէմքերէն պղտեցաւ, որով-
հետեւ լրտեսութեան պաշտօնը
այրերէն առնելով դեղեցիկ սե-
ռին յանձնեց, Հայ և օտարազգի
սիրուն օրիորդներ և արկիւններ
լրտես ընտրուած են, և պէտք է
խստովանիմ թէ ասոնք աւելի
վտանգաւոր են։ Ասոնք՝ եւրո-
պական վերջին ձեւով հագուած,
Բերայի և ուրիշ թաղերու բարձր
սրճարաններու մէջ կը վխտան։
Այս նորելուկ լրտեսները կերելի
թէ Աւետարանը լաւ սերտած են,
որովհետեւ «համբուրելով կը
մատնեն»։ Իրենց գործը կը սկսին
սիրաբանութեամբ և կը վերջա-
ցընեն մատնութեամբ։

Ամէնավերջի լուրը Սուլթանի
հրահրութիւնն է զոր վերապա-
հութեամբ կը հաղորդեմ։

Չեւթ

Փ. Պօլիս, Թ Յուլիս

«Ճարժում»ի յարգոյ ընթեր-
ցողները մեզ հետ ուրախութեամբ
կարգացին անշուշտ, վերջին
թղթակցութեան մէջ, Ֆիլիպէի
ազգային գործերուն հետզհետէ
կանոնաւոր ճամբու մէջ մանելուն
առաջին լուրը։ Իբրև ալ տարի
ու կէսէ ի վեր պուլկարահայ մա-
մուլին մէջ քաղաքիս մասին ե-
րեւցած մերթ սպառնալան, մերթ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ք Ն Ն Ո Ւ Թ Ե Ն Յ Վ Ն Ա Ս Ն Ե Ր Ը

Բ.

Շար. 144րդ քիւիկ

Յիշողութիւնը կանխաւ ստա-
ցուած զաղափարներն ու զգացողու-
թիւնները պահպանելու և զանոնք
վերստին միտքը բերելու կարողու-
թիւնն է։ Մենք ամէն կրթութիւն
ու փորձառութիւն ուղղորդութեան
չնորհիւ կատանանք, բայց մեր այդ
թանկագին կարողութիւնը բոլորու-
վին ապարդիւն պիտի մնար, եթէ յի-
շողութիւնը չունենայինք. անով է
որ մեր ստացած զաղափարներն ու
զգացողութիւնները կը վերականգն-
անանք ու կը խորհինք, ամէն
կրթութիւն, ամէն արուեստ ու գի-
տութիւն կրնանք սորվել։ Հոչակա-
ւոր իմաստասէր Պէն. յիշողութիւնը
«կրթութեան մէջ էն մեծ դերը իս-
ղացող կարողութիւնը» կը համարէ.
«ան է որ, կըսէ, մտային զարգա-
ցումը կարելի կընէ» և իրաւամբ կը
հաւատայ, որ «կրթութեան արհես-
տին մէջ գլխաւոր գործը յիշողու-
թիւնը զարգացնելու յարմար միջոց-

կատարի ու մերթ գայթակղեցու-
ցիչ գրութիւնները խիստ ան-
նպաստ ու արգահատելի գաղա-
փար մը կազմել տուին մեր վրայ
միւս հայ հասարակութեանց քով։
Հիմայ որ յուզումներու այդ-
չարաբաստիկ շրջանը ալ ան-
դառնալի կերպով անցած կրնանք
նկատել, լրջօրէն ու անշահա-
խնդրութեամբ խորհինք անցեա-
լին վրայ, անոր բուն սկզբնա-
պատճառը միտաւելով։

Թաղականի մը պարզ խնդիրը
չէր, ոչ ալ կղերականի մը յա-
խուռն արարքներն էին որ այն-
քան զայրագին կոռուի միջոցին
Ֆիլիպէաբնակ հայ հասարակու-
թիւնը։ Այս կամ այն անունին
ներքեւ, սկզբունքի մը անվկանդ
մարտն էր ան, ազգային յառաջ-
դիմութեան, հասարակական շա-
հերու օրինաւոր պաշտպանու-
թեան, ժողովրդի կամքի յար-
գանքին անընդդիմակ սկզբունք-
ներուն, և ամենէն վեր, ազգ-
դասախարակութեան, ամբողջ
այնքան ցաւազին կացութենէ
մը փրկելու եռանդէն էր որ,
ափ մը խանդավառ երիտասարդ-
ները, և անոնց հետ հասարա-
կութեան ողջամիտ մասը, միեւ
ամէն գնով ձեռք բերելու իրենց
արդար պահանջները։

Աւ այսօր ասոնց արդիւնքը
սկսած է երեւան գալ. ամենէն
ջերմ պահպանողականը Ֆիլիպէի
մէջ համոզուած է այժմ թէ ե-
կեղեցին անխնամ ձեռքերու
յանձնուած էր ժամանակ մը,
թէ վարժարանը կարօտ է հիմ-
նական բարեփոխութիւններու
գէթ կանոնաւոր նախակրթարա-
նի մը վերածուելու։ Եւ համոզ-
ման այդ նոյնութիւնն էր ան-

շուշտ որ զգացուց երկու կողմին
ալ համերաշխութեամբ գործելու
պէտքը։

Առանց ձեռնամուխ ըլլալու աւ-
այժմ կալուածական, ելեւմտա-
կան ներքին խնդիրներուն,
որոնց համար նորնոր թաղ-
խորհրդոյ ձեռնհասութիւնը մեզ
հաւաստիք մը կը նկատենք և
պատճառներ ալ ունինք յուսա-
խար չըլլալու—չբաղինք միայն
վարժարանին խնդրով, որ ամե-
նէն շահեկանը ու միեւնոյն ա-
տեն ամենէն կնճռոտն է զժաղ-
դարար։

Կը լսենք թէ հոգաբարձու-
թիւնը, ինչպէս անցեալ տարի,
դարձեալ վարժարանին բոլոր
պաշտօնեաները հրաժարեցուցած
է, և ինքն իսկ գիտաւորութիւն
ունի այժմէն իր հրաժարականը
մատուցանել առանց նոր շրջա-
նին սպասելու։

Ամէն անգամ որ վարժարանի
մը բարեկարգութեան խնդիրը
կը ծագի, հոգաբարձութիւննե-
րը գործի լըսուին ուսուցիչները
հրաժարեցնելով, անշուշտ այն
համոզմամբ թէ նոր ուսուցիչ մը
ընտրութիւնն ինքնին պիտի
բաւէ վարժարանը բարեկարգած
համարելու։ Մենք այն համոզու-
մը ունինք թէ ուսուցիչներու
վտիտութիւնը յաճախ բարե-
կարգուած վարժարաններու քայ-
քայման պատճառ կը դառնայ,
եթէ նոյնիսկ նոր եկողը համա-
ւառոր մասնագէտ մը եղած ըլ-
լայ։ Այս վերջին կարգի ուսու-
ցիչները մանաւանդ բոլորովին
անյարմար են նախակրթարան մը
վարելու։ Մենք յաջորդ թըղ-
թակցութեամբ մը պիտի ջա-
նանք պարզել թէ ինչպէ՞ս կըմ-

բռնենք Ֆիլիպէի վարժարան-
ներուն բարեկարգութիւնը։ Սա
չափ ըսենք առ այժմ որ վարժա-
րանի մը բարեկարգութիւնը ըս-
կըզբունքի մը, դաստիարակու-
թեան մէթոտներու շուրջը կը
դառնայ և ոչ թէ այս կամ այն
ուսուցիչն՝ անհատապէս։ Այս
կէտը կը յուսանք բմբռնած են
ալ Ֆիլիպէի հոգաբարձութիւնը,
թաղականութիւնը և մինչեւ այ-
սօր հակառակորդ հանդիսացող
անհատները։ Եւ սակայն մենք
ալ կընդունինք թէ Ֆիլիպէի հա-
մար սկզբունքի խնդիրը սերտ
կապուած է ուսուցիչներու խնդ-
րին հետ և ալզ. պաշտօնէու-
թիւնները ստիպուած են դըժ-
բալդարար հրաժարեցնել ներ-
կայ ուսուցիչները իբր անյար-
մար ժամանակիս պահանջներու
համապատասխանող ուղղութեամբ
վարժարան մը պահելու։ Յաջորդ
թղթակցութեամբ մը պիտի աշ-
խատինք «Ճարժում»ի սխնակ-
ներուն մէջ, ըստ կարծիքիս ամ-
բողջովին անփոփել քաղաքիս
վարժարանին բարեկարգութեան
վերաբերմամբ մեր անեցած ըմ-
բռնումները որոնք, կը կար-
ծենք, առանց ու է յաւակնու-
թիւն ունենալու, որոշ մեծամաս-
նութեան մը ըմբռնումներն ըլլան,
և անոնց իրազորումը՝ անոնց
սրտին ամենաջերմ փափաքը։

Աղեխաւերիս, 7 Յուլիս

Նախորդ նամակովս նկարագրած
էի ձեզ ժողովուրդին այն ցոյցը,
որով Օրմանեանի անունը Աղեք-
սանդրիայի եկեղեցիէն ալ ար-
տաքսուեցաւ։ Այս անգամ ուրախ
եմ յայտնելու՝ որ հակառակ յիշ-

ները գիտնալն է»։ Հոռոտացի նշա-
նաւոր Դանկալարթ Քլէտիլէն իր
արուեստ հոնեստութեան գրքին մէջ
այդ յատկութիւնը արդէն կրթու-
թեան հիմը համարած էր։ Արդ՝
կը կարծէք թէ այդքան կարեւոր
կարողութեան մը բնութիւնը եւ
զայն զարգացնելու միջոցները ճանչ-
ցող ուսուցիչներ շատ ունենանք։
Քիչուր չեն անոնք որ Պ. Չարգարի
պէս գոնքիքան մանկավարժի ռովեր
առնելով հանդերձ, յիշողութիւնը
զարգացնելու համար, աղաքը 5-6
տարեկանէն սկսած հրապարակային
քննութեանց ենթարկելու անհե-
թեթութիւնը անհրաժեշտ համարեն։
Մանկավարժութիւնը այսօր բժըշ-
կութեան չափ և թերեւս անկէ ա-
ւելի բարդ ու փափուկ գիտութիւն
մը զարձած է, իրեն իրբեւ հիմ ու-
նենալով կենսախօսական, հոգեբա-
նական, բարոյագիտական և ընկե-
րաբանական գիտութիւնները, և
եթէ մին անհասանելու և ընկերու-
թեան ֆիզիքական կեանքի պահպա-
նումը իրեն նպատակն ընտրած է.
միւսը քաղաքացիներու և ազգերու
մտաւոր ու բարոյական կեանքը
պտտրասանելու ծանր պաշտօնը ըս-
տանձնած է։ Բժշկութիւնն ու ման-
կավարժութիւնն, երկուքն ալ խիստ
պատասխանատու արուեստներ են,
ու երբ այդ պատճառաւ իսկ ամէն

մարդու արտօնուած չէ բժիշկ ըլլալ
և ուրիշին առողջութեան ու կեան-
քին հետ խաղալը, զարմանալի հա-
կասութեամբ մը առաջին հանդի-
պողին թոյլատրուած է ուսուցիչ
ըլլալը, մանուկներու ապագայ մտա-
ւոր ու բարոյական կեանքը պատ-
րաստելու յաւակնելը։ Եւ արդարեւ
մեր մէջ այսօր ձեռքը թուղթի կտոր
մը ունեցողը ուսուցիչ, առաւել
կանուխ արթնցողը՝ հոգին սուրբէն
ներշնչուած մանկավարժ մըն է,
ինչը զաստիարակութեան արուես-
տին և ոչ մէկ նրբութիւնը կը
հասկնայ, հոգ չէ, աւանդականու-
թիւնն ու շողքորթութիւնը ողջ
ըլլան, ինք շնորհիւ անոնց անհնա-
կարող ուսուցիչ է. կրթական խըն-
դիրնեւ մասին բնաւ զաղափար
չունի, ինչ փոյթ, քրտնած են-
թաղութիւններու շնորհիւ կրնայ
գիտուն մանկավարժ ձեւանալ և
ի հարկին իր արտաոտոց կարծիքնե-
րուն իրբեւ միակ վաւերականու-
թիւն իմ կատմիս հրը կը քէ ու կը
պրծի։ Եթէ այդքանը բաւական է
գլխաւոր փոստերով հաստատուած
ճշմարտութիւնները առ ոչինչ համա-
բերով աւանդականութիւնը պաշտ-
պանելու և քրտնած մանկավարժու-
թիւն չը ստիղծելու, կը զարմանամ
թէ ինչո՞ւ այս կամ այն հիւանդու-
թեան համար մամիկներու նաքած

դեղերուն կարեւորութիւն չընծա-
յուր երբ ան ալ անոնց կատմիս և
Պ. Չարգարի խիստ միտաւոր յօ-
գուածին վրայ այսքան ծանրաւա-
լըս անոր չափէն աւելի կարեւորու-
թիւն սալուս համար չէ. իմ միակ
նպատակս է այս առթիւ մեր կրթա-
կան շատ մը թերութիւնները մա-
նանիւ ընել և յիշեալ պարունին
յօդուածին մէջ խնդրոյ առարկայ
եղող սղուն մտաւոր կարողութեանց
բնութիւնը և զանոնք զարգացնել-
լու միջոցները քացատրել։ Ուրեմն
շարունակելով խօսել յիշողութեան
մասին, պատմեմ թէ ինչ է այդ
կարողութեան բնութիւնը և որոնք
ենք զայն մշակելու միջոցները։
Կարճ խօսքով, յիշողութիւնը՝ այլ
և այլ զաղափարներ, զգացողու-
թիւններ ստանալու, պահպանելու
և վերստին միտք բերելու գործո-
ղութեանց մէջ կը կայանայ, իսկ
այդ գործողութիւններն ալ անհրա-
ժեշտօրէն կենթադրեն տեւողութեան
և անհատականութեան զաղափարը։
Արդ՝ գիտնալով որ, ինչպէս ման-
կավարժ էկեր հաստատուած է, աղուն
մէջ ժամանակի և եսի զաղափարը
բաւական ու չէ կը կազմուի, կրնանք
հետեւեցնել թէ 6-7 տարեկանէն
վոքը մանուկները ճշմարտաւ յիշ-
ողութեան տէր չեն ու ներկայի,
անցիակի և ապանիի զաղափարը

և ալ թղթակցութեան յոռետեսութեան՝ տեղոյս թալ. Խորհուրդն ալ իր հաւանութիւնը առաւ ժողովուրդի վճռին. և անցեալ շաբաթ ու կիրակի օրերու պատարագներու միջոցին չի յիշուեցաւ գատապարտուած անունը և այսուհետեւ ալ պիտի չի յիշուի :

Առջի անգամ Վահրամ վարդապետի արարքը՝ ինչպէս յետոյ իմացանք՝ պատասխանատուութենէ խուսափելու ձեւակերպութիւն մըն է եղեր լոկ : Որքան ալ աղեղ ու անիմաստ ըլլայ այնպիսի արարք մը և երկրորդական ինչ շարժումներ ալ գոյութիւն ունենալ կարծուին, մեղի համար շատ միտքարական է մեր կրօնականներուն ու ջոջերուն գրեթէ անգամ ըլլալով այս համերաշխութիւնը ժողովուրդին հետ, որ եթէ յարատեւէ ապագային ալ կրնայ շատ բարար հետեւանքներ ունենալ : Մալթեանք :

Միեւնոյն ատեն կիմանանք թէ Պօլիս՝ կրօնական ժողովին ալ պաշտօնապէս պիտի հարգուի «չի յիշուի» որոշումը և միանգամայն պիտի զրկուի մէկ պատճէնը ժողովուրդին մէջ ցրուած յայտարարութեան, որմէ մէկ օրինակ ալ ձեղ կը զրկեմ հրատարակութեան համար : (*)

ԿԱՐԻՃ

(*) Նիւթերու առատութեան պատճառով Յայտարարութիւնը թողուցինք յաջորդ համարին :

Ծ. Խ.

անկարող են ըմբռնելու : Ուրեմն Պ. Զարգար շարաշար կը սխալի երբ կը կարծէ թէ, նորածինը աշխարհ գալուն ատալին օրէն սնանելու և շնչելու գործողութիւնները կատարելուն համար անհրաժեշտօրէն սալպուած է իր մտաւոր բոլոր կարողութիւններն ալ գործունէութեան մէջ դնել, հետեւաբար մենք զանոնք առանց տարիքի խտրութեան պէտք է մշակենք :

Յիշողութիւնը՝ սղուն ո՞ր ժողովուրդի գաւակ, և ինչ ընդունակութեան տէր ըլլալուն համեմատաբար կամ նուազ ու ի յայտ կուգայ : Վայրենի ժողովուրդներին շատերը, ինչպէս կրէօլանտայի՝ էսփիմացիները, իրենց չափահասութեան մէջ անգամ ժամանակի որոշ գաղափար մը չեն ունենար և այդ պատճառաւ միշտ նեղ մտքի և սամանափակ յիշողութեան տէր կը մնան :

Յիշողութեան բնութեան մասին այսքան խօսելէ յետոյ սենսենք թէ ինչպէս գաղափարները կը պահպանուին և ինչպէս վերատին կերպերն մեր գիտակցութեան մէջ :

Զգացողութիւնները և գաղափարները պահպանելու գործողութիւնը առանց մեր գիտակցութեան տեղի կուենայ, հետեւաբար հոգեբանական իրողութիւն մը չէ. սակայն և այնպէս այդ քանին ալ մեկնութիւն

ՓՈՂՈՒՍՅՈՒՆ, ԽՈՒՄԲՆ ԵՒ

ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՆԹԻՒՆԻՆԸ

Պուրկազ, 12 Յուլիս

Քաղաքիս փողոցային կաճառը՝ ժամանակէ մը ի վեր կատարած գաղանի խորհրդակցութեանց հաշուեկշիռը ամսոյս 11ին, կիրակի օրը յետ աւարտման Ս. պատարագին, ազգասիրարար իր արքանեակներու գրգամը՝ ներկայացուց՝ մեծ արբուութիւն և զարմացում մերազնեցից և օտարներու :

Յիշեալ խուսրը՝ ինչպէս քանիցս խօսած ենք իր գործառութեանց մասին լրագրաց միջոցաւ, կը բաղկանայ բուրգ գաղափարի տէր սղաւարհետաւոր դասակարգէ մը (15 հոգի) : Իրեն առաջնորդ և խրատատու ունենալով՝ զպրօցին վարժապետ ըսուած անորակելին, կամ լաւ եւս այս և այն կուսակցութեանէն վտանգուած հոսած մարմինը :

Ասոնք ատենէ մը ի վեր տեղոյս գալուցական և եկեղեցական խնդրոց մէջ ժողովրդեան արգար իրաւունքը կապտելու նկատմամբ անլուր և նմանը չը անսուած դաւադրութիւններ կատարելէ և խեղճ ժողովրդեան մէջ երկպառակութիւն սերմանելէ յետոյ, չբաւականանալով ասոնցմով, ստորնութեան ամենէն մեծին՝ կը դիմեն չամբնալով :

Յայտնի է թէ ժողովուրդն քուէարկութեամբ (ըստ Սահ. օրինաց) կազմակերպուած թաղ. խորհրդէն ի դատ ուրիշ ոչ մէկը չճանչնար ազգին տեղական գործոց վարիչ, և որովհետեւ կանոնաւոր ընտրութիւնէ յետոյ, ինքնընտրի լիտի և անամօթ խուսր մըն ալ ինքզինք թաղ. ներկայացնելով կուղէր եկեղեցոյն գործերն վարել, հասոյթն իրենց սիրեցեալ վայժապետին վճարել, գինետուններուն մէջ Սվաճեան և անոր նմաններու հետ սպառելու համար. ուստի ժողովուրդը այս անիրաւութիւնն նկատողութեան առած մեծամասնութեան

մը տալու համար իմաստաւորներն և կենսախօսներն այլ և այլ վարդապետութիւններ ստեղծած են : Եօթէնհատուէրի՝ թաղուն և անդիտակից գաղափարները ենթադրութեան, Հարդէլի՝ ու զեղին մէջ հիւլեական շարժումներու, Մօլէշօթի՝ ուղեղային ֆոսֆօրափայլութեան, Տէքարդի՝ ուղեղային սպաւորութեանց և ուրիշներու ալ և այլ գաւառանքներն սա ճշմարտութիւնը կը ծնի թէ՛ գաղափարներու պահպանման պայմաններէ : Այդ կարծիքին հասած է նաեւ Րիպօ իր յիշողութեան հիւանդութեանց ուսումնասիրութեամբը :

Թէեւ անյայտ են գաղափարներն ու զգացողութիւններն պահպանելու պայմաններն, բայց և այնպէս կարելի է եղած յիշողութեան հոգեբանական օրէնքներ գտնելը, որոնք հետեւեալներն են :

1. Գաղափարներն ու զգացողութիւններն առաջին անգամ ստացուած ատեն որքան զօրեղ և որոշ ըլլան, այնքան դիւրութեամբ և երկար ատեն կը պահպանուին : Ուստի որպէսզի ազաք տարւոյն մէջ իրենց ստրկած գոտիքը լաւ յիշեն, Պ. Զարգարի կարծիքին համեմատ ոչ թէ զանոնք հրատարակային քրնտութեան ենթարկուելէ, այլ դա-

թեան ձայնով իր մէջէն մի քանի անձեր սրտած էր Ս. եկեղեցոյն հասոյթին վրայ հակելու և չգողցնելով պահելու համար, մինչ սկզբնաւորութիւն գործառութեան քուէով ընտրուած թաղ. խորհրդոյն :

Յիշեալ ինքնընտրի թաղ. խորհուրդն և փողոցային խուսրը սոյն հարուածին խորութիւնն զգալով և ապագայ պատասխանատուութենէ ազատելու համար, անցեալ շաբաթ. գրութեամբ մը կը դիմէ կառավարութեան, յայտնելով և զրպարտելով թէ մի քանի մարդասպաններ ռիվօլվիւններով, զանակներով և սորաներով եկեղեցին զրմած կուղէին շարիք գործելու և այդ խուսրարներու անմիջական բանտարկուելու և քստորուիլու կը խնդրեն : Պաշտօնագիրը կը հասնի կիրակի և փողոցային խուսրը նոյն օրը ոտիկանաչան ու ոտիկաններ քերելով եկեղեցին, ձերբակալման թուղթը ձեռքերին, և հինգ հոգի ձերբակալու կուտան. Մակար Յովհաննէսեան, Յակոբ Սրապեան Տիվրիկցի, Պօղոս տէր Պետրոսեան Վանցի, Մանուկ Տիվրիկցեան Վանցի, Թուամա Խաչիկեան Մուշեցի. նոյնպէս զպրօցի զանձանակը և ստիկանապետին կը յանձնեն իրր գատապարտեալ. որ այժմ ևս ոտիկանատուն կը գտնուի :

Ազգասիրութիւն մը որ անմեկնելի և անբացատրելի է. շնորհիւ ճիւղին քննարկի յեղափոխական մի ինչ որ Շիտանի՝ :

Ասոնք փոխանակ ազատ Պուրկազի մէջ տարելու, թողնելու, կրկին կը խնդրեն. Սուրբանական հողերուն վրայ և շքանշաններով ու րոշվարներով ի գործ դնեն իրենց բնածին շահատակութիւնները :

Ապրին, երեսին սեփ սեւ մնայ երկար տարիներ :

Հայ ժողովրդեան թուք ու մուրին առարկայ :

Դիտող

—)(—

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պատրիարքարանէ շրջաբերական մը պիտի զրկուի բոլոր եկեղեցեաց, որպէս զի վերաշինութեան կարօտ եկեղեցիներու համար հաւաքուած գումարները օր առաջ զրկեն, իրենց նպատակին գործածուելու համար :

— Ամերիկայէն Յովսէփ Եպիսկոպոս 157.5 սակի, Եգիպտոսէն 80 սակի և Էտիոպիէն կրկին անգամ 12 սակի զրկուած է Պատրիարքարան, ի նպատակարտելոց :

— Սահակ Մետրոպեան մրցանակարաշխութեան հանդէսը յուլիս 8ին կատարուել է Ղալաթիոյ խորհրդարանին մէջ : Մրցանակի գումարը բաժնուել է քանի մը զրքերու վրայ, քանի որ ամբողջ ընդունելու արժանի հեղինակութիւն մը չէ ներկայացուել :

— Վանէն «Մշակ»-ին կը գրեն. «Կաթողիկոսի գործը թէ և ստակով է, բայց նորէն խաղաղութիւնը և այնչափ շատ կը յաճախեն նոցա եկեղեցին, ստակը պակասածին պէս ետ կը դառնան : Ազգասիրութիւնը ծանր կերպով կը տիրէ երկրի վրայ, ատոր համար լուսաորջականները կաթողիկոսներն են : Անձրեւի շատ կարօտութիւն կայ, գրեթէ բոլոր ջուրերը պակաս են, վարի Հայոց Զորի նոր Գիւղի ջուրը առին Վանայ համար, իսկ նոր Գիւղին Խօշաբայ գետէն ջուր կը բերեն :

Ամսէ մը տալի է որ մարդիկ կաշխատին ջուրի ճամբան փորելու : Նոր հունձքերը լաւ կերպերն, հացի օխան 50 փարա է :

սաւանդութեան միջոցին ուսուցանելի ճամբարութիւնները որոշ և անգղիցի կերպով աւանդելու է. իսկ այդ նպատակին հասնելու համար ալ աղաքը շահագրգռելով զանոնք յուղելու և միշտ ուշադիր պահել գիտնալու է :

2. Զգացողութիւն մը կամ մտաւոր գործողութիւն մը քանի շատ կրկնուի, անոնց համապատասխանող գաղափարները ապահով ու երկար ատեն կը պահպանուին : Այս պատճառաւ է որ դասերու կրկնութիւններն զպրօցներու մէջ օգտակար համարուած են : Յիշողութիւնը կրկնութեան միջոցաւ զարգացնելն մեր ուսուցիչներէ շատերուն անցիտակցօրէն ընդունած միակ մէթոտն է զոր զմարդարար շատ գէշ կերպով ըմբռնուած և չափազանցութեան հասցուած ըլլալով՝ աշակերտը մեքենական աշխատութեամբ միայն կը սորվի իր դասերը ի վնաս իր գաղափարներն և մտքի այլ կարողութեանց :

3. Գաղափար մը որքան ուրիշ գաղափարներու հետ ընկերացած ըլլայ՝ այնքան աւելի դիւրաւ կը պահպանուի և վերստին միտք կը բերուի : Եստ զժամար է յիշողութեան մէջ պահել անկապ խօսքեր, այդ պատճառաւ դասերը իրարու շարունակութիւն ըլլալով՝ արամաբանա-

կան կարգով մը զիրար պէտք է ամբողջացնեն. յերակախութեան, թուարանութեան և այլ դասերու վերացական կանոնները օրինակներու և փորձերու վրայ պէտք է թանձրացած ըլլան : Առանց այս օրէնքներու գործողութեան անկարելի է սղուն յիշողութեան, գաղափարաց յարակցութեան ու երեւակայութեան կարողութիւնները զարգացնել, եթէ նոյնիսկ զայն մեր հրաշագործ հրապարակային քննութեանց ալ ենթարկենք : Ամբողջ անհետօրինակ, այսինքն յիշողութիւնը զարգացնելու արտեստը, այս օրէնքներէն մանաւանդ վերջինին վրայ հիմնուած է, և եթէ Պ. Զարգար զանոնք կանգիտանայ, իր ուսուցիչ ըլլալը պատրաստելով կրնայ չբեղանալ, բայց մեր փոքրիկները կրթելու յաւակնող կարգ մը ողորմելի պատուելիները ինչ պիտի ըսեն երբ կրթական ո՞ր է ինչորոյ մը մասին սխալ կարծիք մը իսկ յայտնելու կարողութիւնը չունենալով հանդիմ, շնորհիւ իրենց շողոքորթելու և նենդեղ վարդապետութեան՝ կը շարունակին միայ մեր ապագայ հայութիւնը ներկայացնող սերունդը կրթելու վն պաշտօնին մէջ, այդ բարոյական ու մտաւոր սնանկները :

Կ. Պիօն

— Կաթողիկոսը երկու հարիւր
բուսի է զրկած Սուշավայի հո-
գարարձուծան՝ Կօրա-Համօրէի
փնտրած հայերուն նուիրելու
համար :

— Շուշիի (Կովկաս) եկեղեցի-
ներէն մէկուն գործակալ քահա-
նան և երկու ուրիշ պարզ քահա-
նաներ կ'օտարեր են դիպարդի
արկղը :

— Պօլսէն գերմանական թեր-
թերուն կը հեռագրեն յուլիս 5ին.
«Երկու արտակարգ ժողով տեղի
ունեցաւ . խնդիր եղած էր դադ-
թականներու վերագարձը . վեր-
ջին ժողովին մէջ խորհրդոյ
նիւթ եղաւ և ուս-թըքական
սահմանին վրայ վերջերս տեղի
ունեցած քրտական անկարգու-
թիւնները . որոշուեցաւ քրդերը
պատժել . Ռուս կառավարութիւնը
կը պահանջէ միահամուռ ոյժերով
պատժել քրտերը» :

— Վառնայի Ազգ. երկսեռ
վարժարանաց հոգաբարձութիւնը,
ինչ ինչ պատճառներով իրենց
պաշտօնէն դադարեցուցեր է ու-
սուցչական ամբողջ մարմինը :

Մենք ջանալով թափանցել
այդ ինչ ինչ պատճառներուն,
յաջորդով կը խոստանանք վե-
րագրուել այդ խնդրոյն :

— «Բիւզանդիոն»ին մէջ կը
կարգանք հետեւեալը .

«Ազգ. Պատրիարքարանի Օ-
րէնքին (Սահմանադրութեան
նոր անունը) վերաքննութեան
ծրագիրը ամբողջացած ըլլալով,
պէտք եղած թուով օրինակուած
և Խառն ժողովոյ բոլոր ան-
դամներուն զրկուած է, որպէս
զի իւրաքանչիւր եկեղեցական և
աշխարհական անդամ իր դիտու-
ղութիւնները պատրաստէ՝ յայտ-
նէ Խառն ժողովոյ յօդուած առ
յօդուած ընթերցման առթիւ
խորհրդակցութեան առարկայ
ըլլալու համար . ըստ սովորու-
թեան .

— Նոյն թերթին մէջ՝ կը կար-
գանք նաև .

Ատանայի Բայաս գաւառակի
Չոք Մէրզաբէն քահանայք տե-
ղական ինչ ինչ կարեւոր խնդրոց
համար է Պատրիարքարան և թէ
Ատանայի Առաջնորդարանին տե-
ղակազրեր զրկած ըլլալով,
Խառն ժողովը նկատողութեան
առաւ այդ խնդրոց կարեւորու-
թիւնը . և հարկ եղած անօրի-
նութիւնը ընելէ առաջ, որոշեց
Ատանայի Առաջնորդարանէն
բացատրութիւններ և տեղեկու-
թիւններ ստանալ :

— Չոնկուրակէ 1,000 շրուշ
զրկուած է Պատրիարքարան
ի նպաստ կարօտելոց :

— Չարսանձագի տեղապահ Տ.
Մակար վրդ. մանրամասն տեղե-
կագիր մը զրկեր է Պատրիար-
քարան, որով նպաստի կարօտ
աղքատներուն թիւն հաղար եր-
կու հարիւր հոգիի մօտ կը ճշգ-
արու և էգ. և ըստ այնմ նպաստ
կը խնդրէ :

ՄԱՀԱԳՈՅԺ

Փրովիտէնսէն մեղ կը դրեն
յուլիս 14 թուականաւ .

«Տխուր, շատ տխուր լուր
մըն է հաղորդելիք» :

Փրովիտէնսի հայութիւնը խոր
սուգի մէջ է : Մահուան տխուր
հրեշտակը իր ցուրտ ձեռքերով
խլեց մեզմէ մեր սիրեցեալ հո-
վիւր . Արժ .

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԳ. ՄԻՍԱԿԵԱՆԸ

Որ հաղիւ 15 օրի չափ հիւանդ
պատկեցաւ :

Փրովիտէնսի և ընդհանրապէս
զինքը ճանչցող բոլոր հայերը
դեռ երկար պիտի ողբան այս
կորուստը . և անոնց մէջ միշտ
թարմ պիտի մնայ երիտասարդ
վարդապետին յիշատակը» :

Կարապէտ Սեփուան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պօլսոյ Սերպիական գեսպան
և Ռուսաստանը յառաջիմական-
ներու պետ նովակովիչը, իր
բարեկամներու ձերբակալութեան
պատճառով պաշտօնէն հրաժա-
րած է : Նովակովիչը բաւակա-
նին աղքատիկ ըլլալով, իր այս
քայլը ահագին պաւորութիւն
գործած է : Թագաւորը դեռ ըն-
դունած չէ անոր հրաժարականը .
Փէթէրպուրկի դեսպան մե-
ներալ Գրուիչը, Սերպիա ճամ-
բայ ելլելու միջոցին ըսած է
«Նովոյէ-Վրէմիայ» ի մբագիր-
ներէն մէկուն թէ, ինքը վախ-
չունի ներկայանալու թագաւոր
Ալեքսանտրի և Միլանի առջեւ .
որովհետեւ ամենեւին տեղեկու-
թիւն չունի դաւադրութեան մա-
սին : Աւելցուցած է նաև թէ,
ինքը գիտէ իր պարտականու-
թիւնները գէպի իր երկիրը,
ատոր համար չուզէր մնալ օտար
երկրի մէջ . և կը գերադասէ
մտնալ Սերպիա, եթէ բանտն ալ
մտնալու ըլլայ :

Պաշտօնապէս կը հաղորդեն
թէ Միլանի գէմ եղած դաւադ-
րութեան համար ամբաստանուող-
ներուն թիւը 26 է :

Չինորական դատարանը դա-
տը պիտի տեսնար յուլիս 13ին :

— Իտալական ժեներալ ժիլէ-
տին, որ իբր լրտես ձերբակա-
լուած էր ֆրանսական կառավար-
ութեան կողմէ, և դատա-
պարտուած բանտարկութեան
ու 5000 ֆրանք տուգանքի, յու-
լիսի ազգային մեծ տօնին, ա-
զատ արձակուած էր, սակայն
առանց տուգանքէ ազատուելու :
Հիմակ ֆրանսական կառավարու-
թիւնը կը պահանջէ այդ տու-
գանքը :

— «Տէյլը-Նիւզոնի Պէրլինի թըզ-
թակիցը արձագանգ կը ըլլայ շու-
կի մը, զոր պէտք է շատ վերա-
պահութեամբ ընդունիլ, և ու-
րուն համեմատ, Չարը առաջար-
կած է եղեր Եւրոպական բոլոր
վեհապետներուն Փարիզի 1900
արուեստահանդէսին իրարու
հանդիպիլ Փարիզ :

ԳՍԻԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐ

«Ակնայ, Արարկիրի, Վանի, Մուշի
և Ռշտուկաց բարբառեհեհեհ

Աքօ—Հայր, պապ
Այալ—Հիւթ, բուտ, կերակուր կեն-
դանեաց

Աղրնծեղ—Խորովել, խանծել
Աղիւն—Լաց, արտասուք

Անարար—Բերդ
Այրախ—Թաշկինակ

Այլընիկ, այլիկ—Թշուտ, ողորմելի
Անաւ—Ընծայ

Ապով—Համար, քու ապով, քու հա-
մար

Արմի—Գեանախնձոր
Արմուկ—Սրուսդ

Բաջուկ—Տեսակ մը նկանակ իւզով
պատրաստուած

Բգել—Հրել, մշտել
Գագար—Կլիսանոց (տեսակ մը գըլ-
խանոց զոր կը գործա-
ծեն հայ ազնկուսք)

Գեմիւն—Ապուշ
Գանի կաւ Գանիւ—Սառիլ

Գորայ—Գաւազան
Գոյ կաւ Գոյիկ—Ուռ

Գովի—Ողբ
Դաղեղ—Խորովել, այրել

Դառն—Թանձր, սերս, նեղ, դժուար
Դեսի—Սափոր

Թարակեղ—Դաղրել
Թապեղ—Չգել, վոնտել

Թեղեղ—Ժողովել
Թեղեղեղ—Անդրավարտիք

Թօրիկ—Չգել
Թօրուկ—Փայլուն

Իւնայ—Ինչպէս
Լե—Ալ

Խեկար—Կէս թուր
Խըլուկ—Երեկոյ

Խօլու—Տառայ
Խօլի—Երանի թէ

Խի—Իմ
Խիգ—Ինձ

Կարուկ—Հասած պտուղ
Կաղար—Մեծ կողով

Կաղարին կաւ Կաղարին—Հող, տեսակ
մը կապոյտ հող որով գիւ-
ղացի կանայք կը ներկեն
կամ կը ծեփեն իրենց տու-
ները

Կաղեղ—Սառել
Կըյեղ—Կտրել

Կղուլ—Սառ, ցուրտ, պող—ձեռքերս
կղմեցաւ, ձեռքերս պա-
ղեցան, ստեցան

Կողիւն—Կեղեւ ծառերու եւ այլն
Կոյեղ—Խորակիւ, փակել, արել

Կոյլակ—Փոքրիկ կողով
Կուկուլ—Տեսակ մը ջուրի աման

Կուկուլ—Յոյս
Կսեղ—Դգալ

Հանդե—Ահա, ահաւասիկ նայէ՛
Հապ—Յարմարութիւն, յարմարել
Հաւար—Օգնութիւն

Հիւր—Խոյ
Հըյեղ—Բրբրել, բաժանել, գատել

Հեյլար—Առաւօտ
Ճոքրիկ կաւ Ճոքրակ—Խոզովակ

Մաղ—Նոխալ, քօշ
Մանիւն—Հաւասարութիւն, նմանու-
թիւն

Մարե—Մեծ մայր
Մեր—Մայր

Մեկեկ—Բանջար, ուտելու բանջար
Մոնայ—Դուրանալ

Մօր—Հայրենիք
Յորի—Ինչու

Յոռուստեւ—Փնտրել, թշնամութիւ-
նով պատճառներ գտնել
Նշայ կաւ Նշարայ—Օսլա

Նաշիւ—Կեղեւ, կեղտուր
Շըլիլ—Վիզ, կոկորդ

Շիլա—Կաւ (կարմրագոյն)

Ուգի կաւ ուծի—1. Պաղ, ցուրտ, 2.
պաղակ

Ուլ—Որու
Չաղ—Ժամանակ

Չանց—Թող
Չիղ—Չիւնի գնդակ

Չուլ կաւ Չուլ—Բուրց
Պապա—Հայր

Պեզար—Անհանգիստ
Պիքալս—Դժբախտ

Պրոն—Որդ
Չախ—Ճրագ

Սաշրա—Տեսակ մը վրայի հագնելիք
Սահնակ կաւ զանուկ—Բալիւր

Սեհիւր—Բազմոց
Սըրբել—Ապաստանել

Սըլիկ—Լուրիս
Սկեղ—Ընկղմել

Սոյ—Սանար
Վագոյի—Օղի վագելը, երբոր տան
մը գուռը ու պատուհանը բաց է

Տասաշեղ—Շատանալ
Տաստօր—Դայեակ, մանկարարձ

Տարս—Պնդութիւն, կարծրութիւն
Տեհե—Մեծ հայր

Տուր կաւ դուր—Ախորժակ
Տօ—Դօ

Բեչեղ—Բաղդերեղէնիք (խաղողէ եւ ու-
րիշ պտուղներէ կազմուած)

Փուր—Թարմ ընկուզի կանայ կեղեւ
որ կը գործածուի ներկի համար

Փոչոյ—Գոտակ, գլխարկ
Քի—Քեղ, զփ, գփել

Օշիկ—Շուռ
Հաւաքից
ՄԱՐԳԱՐ ԷՍԿԻՃԵԱՆ

Շարժուլ կը ծախուի նամակատան
դիմաց նոր բացուած փոքրիկ գրա-
տունը :

Ա Ձ Դ

Փորագրութեան, լուսատուութեան
և լուսավիճագրութեան ամէն ճիւ-
ղերուն մէջ ստացած հմտութեանը
համար՝ Գերմանիոյ մէջ մեծաւ
ընդունող հայ երիտասարդ մը կը
փնտռէ գրամատէր ընկեր մը՝ սոյն
գեղարուեստներու վրայ գործ սկսե-
լու համար : Փափաքողն զիմէ խմբա-
գրութեանս :

1-3

Ա Ձ Դ

Հայերէն եւ ֆրանսերէն լեզուաց,
ինչպէս նաև կրօնագիտութեան,
պատմութեան, աշխարհագրութեան,
թուաբանութեան եւ բնական գի-
տութեանց հմտ ուսուցիչ մը կը
փափագի ազգային վարժարանաց
միոյն մէջ պաշտօն ստանձնել . քա-
նակցութեանց համար պէտք է զիմէ
խմբագրութեան :

Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

40 Շ Կ Ա Մ

Մուսայրա, բաղնիք փողոց,
Հանի Հասանի օրհիւն սակ :

Ճաշակաւոր, տոկուն եւ ձեւաւոր
կօշիկ շինել ալ ուզողը պէտք է զիմէ
Պ. Սահիան Խօրասանճեանի, որուն
ճարտարութիւնը մէկ փորձով երեւան
կելլայ :

Գիները խիստ դիւրամտելի :

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печати на „Взаимность“ Варна.